# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ
# ՎԱՐԿN 8390-AM
# ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# ԵՎ
# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն | 6 |
| Հատկացված միջոցների օգտագործումն ըստ Ծրագրի գործունեության տեսակների | 10 |
| Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 11 |

Փի-Էյչ-Փի Փարթնըրզ ՓԲԸ
PHP Partners CJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան,Ալեք Մանուկյան 15ա
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան,Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. Tel. (+374)10204090
Էլ-փոստ E-mail general@php.am

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վարչապետի Աշխատակազմին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ Վարչապետի Աշխատակազմի կողմից իրականացվող Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, Միջոցների օգտագործման մասին հաշվետվությունն ըստ Ծրագրի գործունեության տեսակների, Վճարումների դիմումների համադրման հաշվետվությունը, Հատուկ հաշվի հաշվետվությունը և ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն առ 31 դեկտեմբերի 2023թ. և այլ բացատրական նյութեր:

Մեր կարծիքով կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և դրանց օգտագործումը, միջոցների օգտագործումն ըստ Ծրագրի գործունեության տեսակների և դրամական միջոցների հոսքերը՝ *Ֆինանսական հաշվետվողականություն ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի* Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ) և Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքած ֆինանսավորման համաձայնագրի (Վարկ N 8390-AM) համապատասխան:

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտների համաձայն մեր պատասխանատվությունը ներկայացվում է ստորև՝ մեր Հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* պարբերությունում: Մենք հանդիսանում ենք ՀՀ Վարչապետի Աշխատակազմից անկախ աուդիտորներ՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնագրքի: Մենք կարծում ենք, որ մեր կողմից հավաքագրված աուդիտորական ապացույցները բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ. ծրագրի ավարտ*

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 1(բ)-ի վրա, որտեղ նշվում է, որ ծրագրի փակման ամսաթիվը 2024 թվականի մայիսի 31-ն է: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առումով:

*Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ.օգտագործման և բաշխման սահմանափակում*

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 2(ա)-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՀՀ կառավարությանը և Միջազգային Զարգացման Ասոցիացիային տեղեկատվություն տրամադրելու նպատակով՝ օժանդակելու նրանց գնահատել Ծրագրի իրականացումը: Արդյունքում, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող տեղին լինել մեկ այլ նպատակի համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առումով:

*Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 2(ա)-ում, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի ներդրման համար, որը ղեկավարության կարծիքով անհրաժեշտ է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են կեղծիքի, թե սխալի հետևանքով:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծրագրի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ծրագիրը լուծարելու կամ Ծրագրի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և ցուցաբերում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք

- աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում.
- հասկանում ենք ներքին հսկողության համակարգն այնքանով, որքանով դա վերաբերում է աուդիտի առաջադրանքին՝ նախագծելու աուդիտի ընթացակարգերն այնպես, որ դրանք տեղին լինեն կոնկրետ հանգամանքներում, սակայն ոչ ՀՀ Վարչապետի Աշխատակազմի կառավարման ներքին հսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի՝ ղեկավարության կողմից կիրառման տեղին լինելը և հիմնվելով հավաքագրված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն այն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ԱԽՈԵԾ-ի անըդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, մենք պետք է ուսումնասիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումները, իսկ եթե այդ բացահայտումները համապատասխան չեն, ապա աուդիտի եզրակացությունում պետք է ձևափոխենք մեր կարծիքը: Մեր կողմից ներկայացվող եզրակացությունները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև աուդիտի հաշվետվության ամսաթիվը: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող է խաթարել ԱԽՈԵԾ-ի ՝ անընդհատության հիմունքի կիրառումը.
- .
- երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմքում ընկած գործառնությունները և դեպքերն այնպես, որ ապահովի ճշմարիտ ներկայացում:
- Ի լրումն այլ հարցերի, կառավարման լիազոր անձանց հետ քննարկում ենք աուդիտի ընդգրկման շրջանակը և ժամկետը, ինչպես նաև նշանակալի բացահայտումները, ներառյալ՝ աուդիտի ընթացքում մեր կողմից հայտնաբերած ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունները:

Հարգանքով,

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Լիլիթ Մինասյան
Աուդիտորական ծառայությունների ղեկավար

«Փի-Էյչ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ
21 հունիսի 2024թ.

| *ԱՄՆ դոլար* | **Փաստացի** | | | **Պլանավորված** | | | **Տարբերություն** | | | **Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2023** | **2022** | **Կուտակային** | **2023** | **2022** | **Կուտակային** | **2023** | **2022** | **Կուտակային** | |
| **Դրամական միջոցների սկզբնական մնացորդ** | | | | | | | | | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ Վարկի համար | - | 89,866 | | | | | | | | |
| Հատուկ հաշիվ ՀԲ ֆինանսավորման համար | 1,355,198 | 1,991,934 | | | | | | | | |
| **Ընդհանուր** | 1,355,198 | 2,081,800 | | | | | | | | |
| Ավելացումներ՝ | | | | | | | | | | |
| **Ֆինանսավորման աղբյուրներ** | | | | | | | | | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորում | 1,308,156 | 939,179 | 4,968,276 | | | | | | | |
| ՀԲ ֆինանսավորում | 5,668,094 | 4,125,156 | 29,729,280 | | | | | | | |
| **Ընդհանուր դոնոր միջոցներ** | **6,976,250** | **5,064,335** | **34,697,556** | | | | | | | |
| **Արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն** | | | | | | | | | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորում | 2,645 | 11,625 | 19,729 | | | | | | | |
| **Ընդհանուր** | **2,645** | **11,625** | **19,729** | | | | | | | |
| *Հանած՝* | | | | | | | | | | |
| **Հատկացված միջոցների օգտագործում** | | | | | | | | | | |

| *ԱՄՆ դոլար* | Փաստացի | | | Պլանավորված | | | Տարբերություն | | | Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2023 | 2022 | Կուտակային | 2023 | 2022 | Կուտակային | 2023 | 2022 | Կուտակային | |
| **(1) Թույլատրելի Ծախսումների Ծրագրի համար կատարաված վճարումներ Նախագծի Մաս Ա-ի շրջանակում** | | | | | | | | | | |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | - | - | - | | | | | | | |
| Վարկի ֆինանսավորմամբ | - | - | 9,700,000 | | | | | | | |
| **(2) Ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական ծառայությունների և խորհրդատվական ծառայությունների (այդ թվում՝ աուդիտորական ծառայությունների), վերապատրաստումների և լրացուցիչ գործառնական ծախսերի ձեռքբերում Նախագծի Բ.1 , Գ և Դ Մասերի շրջանակում** | | | | | | | | | | |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | 69,741 | 176,876 | 1,870,946 | | | | | | | |
| Վարկի ֆինանսավորմամբ | 553,353 | 888,743 | 5,243,244 | | | | | | | |
| **(3) Դրամաշնորհներ Նախագծի Բ.2 մասի շրջանակում** | | | | | | | | | | |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | 39,359 | 176,889 | 607,883 | | | | | | | |

| *ԱՄՆ դոլար* | Փաստացի | | | Պլանավորված | | | Տարբերություն | | | Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2023 | 2022 | Կուտակային | 2023 | 2022 | Կուտակային | 2023 | 2022 | Կուտակային | |
| Վարկի ֆինանսավորմամբ | (30,902) | 1,137,269 | 2,742,926 | | | | | | | |
| **(4) Պետություն-Մասնավոր Գործընկերության Նախաձեռնությունների Ֆինանսավորում Նախագծի Մաս Բ.3-ի շրջանակներում** | | | | | | | | | | |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | 1,201,701 | 686,905 | 2,509,176 | | | | | | | |
| Վարկի ֆինանսավորմամբ | 4,898,457 | 2,735,880 | 10,315,726 | | | | | | | |
| **(5) Վարկի դիմաց կատարված վճարում ՀԲ** | - | - | 125,000 | | | | | | | |
| **(6) Ապրանքներ, աշխատանքներ, խորհրդատվական ծառայություններ, ոչ խորհրդատվական ծառայություններ Ազգային վենչուրային հիմնադրամի ներդրումների և Ազգային վենչուրային հիմնադրամի ենթաբաղադրիչների համար Մաս Բ.4-ի շրջանակներում (Վարկի ֆինանսավորմամբ)** | - | - | - | | | | | | | |
| **Կառավարության կողմից համաֆինանսավորում** | **1,310,801** | **1,040,670** | **4,988,005** | **1,766,951** | **1,430,306** | **5,444,155** | **(456,150)** | **(389,636)** | **(456,150)** | **7,292,497** |
| **Ֆինանսավորում վարկի միջոցներով** | **5,420,908** | **4,761,892** | **28,126,896** | **20,163,650** | **6,568,938** | **42,869,638** | **(14,742,742)** | **(1,807,046)** | **(14,742,742)** | **48,000,000** |
| **Ընդհանուր** | **6,731,709** | **5,802,562** | **33,114,901** | **21,930,601** | **7,999,244** | **48,313,793** | **(15,198,892)** | **(2,196,682)** | **(15,198,892)** | **55,292,497** |

| *ԱՄՆ դոլար* | **Փաստացի** | | | **Պլանավորված** | | | **Տարբերություն** | | | **Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2023** | **2022** | **Կուտակային** | **2023** | **2022** | **Կուտակային** | **2023** | **2022** | **Կուտակային** | |
| **Դրամական միջոցների վերջնական մնացորդ** | | | | | | | | | | |
| Կառավարության կողմից համաֆինանսավորում Վարկի համար | - | - | | | | | | | | |
| Հատուկ հաշիվ Վարկի համար (ՀԲ ֆինանսավորում) | 1,602,384 | 1,355,198 | | | | | | | | |
| **Ընդհանուր** | 1,602,384 | 1,355,198 | | | | | | | | |

Ծրագրի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2024 թվականի հունիսի 21–ին:

Արման Ադիլխանյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի ղեկավար

Ստեփան Մարգարյան
ԱԽՈԵ Ծրագրի Կառավարիչ

Գոռ Մարտիրոսյան
ԱԽՈԵ Ծրագրի ֆինանսական գծով ղեկավար

| | Փաստացի | | | Պլանավորված | | | Տարբերություն | | | ԾԳՓ Ծրագրի տևողություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2023 | 2022 | Կուտակային | 2023 | 2022 | Կուտակային | 2023 | 2022 | Կուտակային | |
| **Ծրագրի գործունեության տեսակները** | | | | | | | | | | |
| ***Մաս Ա.Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում*** | - | - | 9,700,000 | | - | - | | - | - | 10,000,000 |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | - | - | - | | - | - | | - | - | - |
| Վարկի ֆինանսավորմամբ | - | - | 9,700,000 | | - | - | | - | - | 10,000,000 |
| ***Մաս Բ.Ներդրումների և արտահանման խթանում*** | 6,108,614 | 4,833,362 | 19,581,966 | | - | - | | - | - | 41,449,166 |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | 1,241,060 | 863,794 | 4,266,409 | | - | - | | - | - | 6,535,296 |
| Վարկի ֆինանսավորմամբ | 4,867,554 | 3,969,568 | 15,315,557 | | - | - | | - | - | 34,913,870 |
| ***Մաս Գ: Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում*** | 331,533 | 648,359 | 2,187,263 | | - | - | | - | - | 2,458,022 |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | 5,858 | 101,871 | 354,555 | | - | - | | - | - | 458,022 |
| Վարկի ֆինանսավորմամբ | 325,675 | 546,488 | 1,832,708 | | - | - | | - | - | 2,000,000 |
| ***Մաս Դ.Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում*** | 291,562 | 320,841 | 1,645,672 | | - | - | | - | - | 1,385,309 |
| Կառավարության համաֆինանսավորմամբ | 63,883 | 75,005 | 367,041 | | - | - | | - | - | 299,179 |
| Վարկի ֆինանսավորմամբ | 227,679 | 245,836 | 1,153,631 | | - | - | | - | - | 961,130 |
| Վարկի դիմաց կատարված վճարում ՀԲ | - | - | 125,000 | | - | - | | - | - | 125,000 |
| **Ընդհանուր ծրագրի ծախսեր** | 6,731,709 | 5,802,562 | 33,114,901 | 21,930,601 | 7,999,244 | 48,313,793 | (15,198,892) | (2,196,682) | (15,198,892) | 55,292,497 |

# 1 Նախապատմություն

## (ա) Կազմակերպությունը և կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը

Ծրագիրը սկզբնապես իրականացվել է «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի կողմից սկսած 2014 թվականի օգոստոսի 6-ից: Հետագայում 2018 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՀ կառավարությանն N 1427-Ն որոշման համաձայն՝ «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի կողմից իրականացվող գործունեությունը փոխանցվել է ՀՀ ֆինանսների նախարարության Ծրագրերի իրականացման վարչության կառուցվածքային մասնագիտական ստորաբաժանմանը: Այդուհանդերձ, 2020 թվականի հունվարի 1-ից ծրագրի ղեկավարությունը կրկին փոխվել է, և ներկայումս ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Վարչապետի Աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կողմից:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված ֆինանսավորման համաձայնագրի համաձայն (Վարկային համաձայնագիր), 50,000,000 ԱՄՆ դոլար վարկ է հատկացվել Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացմանը՝ ապրանքների ձեռքբերումը, ինչպես նաև խորհրդատուների կողմից մատուցված ծառայությունները և առաջացող գործառնական ծախսումները ֆինանսավորելու համար: Համաձայն Վարկային Համաձայնագրի Երրորդ Փոփոխության կնքված 2020 թվականի Հոկտեմբերի 29-ին վարկի սկզբնական գումարը նվազեցվել է 2,000,000 ԱՄՆ դոլարով դառնալով 48,000,000 ԱՄՆ դոլար:

Ձեռքբերված ապրանքների, խորհրդատուների կողմից մատուցված ծառայությունների և գործառնական ծախսերից առաջացող հարկային պարտավորությունները վճարվում են ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող միջոցների հաշվին: ՀՀ կառավարության համաֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 7,300,000 ԱՄՆ դոլար:

Ծրագրի նպատակն է հզորացնել Փոխառուի հնարավորությունները խթանելու արտահանումը, ներդրումների գրավումը և ընկերություններին տրամադրել որակի կառավարման ծառայություններ:

Ծրագիրը բաղկացած է հետյալ մասերից՝

- *Մաս Ա. Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում*
  Սույն Բաղադրիչի նպատակն է նպաստել առևտրի խթանմանը և որակի համակարգի բարելավմանն ուղղված բարեփոխումներին.
- *Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում*
  Սույն Բաղադրիչի նպատակն է հզորացնել տեղական արտահանողների հնարավորությունները արտասահմանյան շուկաներում մրցունակ լինելու

նպատակով, նպաստել բիզնես խմբերի զարգացմանը և գրավելու արտասահմանյան ուղղակի ներդրումներ.

- *Մաս Գ. Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում*
  Սույն Բաղադրիչի նպատակն է արդիականացնել չափագիտական, ակրեդիտացման և ստանդարտացման ծառայությունները՝ տնտեսությանը որակի հավաստիացման համապատասխան ծառայություններ տրամադրելու նպատակով.
- *Մաս Դ. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում*
  Սույն Բաղադրիչի նպատակն է ֆինանսավորել ծրագրի իրականացումը և մոնիթորինգը:

Համաձայն 2020 թվականի հունվարի 10-ին կնքված Վարկային Համաձայնագրի Փոփոխության՝ *Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում բաղադրիչը* հիմնականում իրականացվում է «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ»-ի (այսուհետ՝ ԱՆԻՖ), ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, «Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ»-ի (այսուհետ՝ ՁԻՀ) և «Ներդրումների Աջակցման Կենտրոն»-ի (այսուհետ՝ ՆԱԿ) կողմից: ԱՆԻՖ-ը պատասխանատու է 2.1 (Ներդրումների և արտահանման խթանման աջակցման ծառայություններ) ենթաբաղադրիչի համար: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը պատասխանատու է 2.4 (Ազգային վենչուրային հիմնադրամ) ենթաբաղադրիչի, իսկ ՁԻՀ-ը՝ 2.2.2 (Նորարարական համաֆինանսավորվող դրամաշնորհներ) և 2.3 (Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում գործունեություններ) ենթաբաղադրիչների համար: ՆԱԿ-ը պատասխանատու է 2.2.1 (Արտահանողների Զարգացման Դրամաշնորհների Ծրագիր) ենթաբաղադրիչի համար:

ԱՆԻՖ-ի կողմից կատարված գործառնական ծախսերի ֆինանսավորումը դադարեցվել է 2021 թվականի դեկտեմբերի 31-ին:

Իրականացնող մարմինների կողմից կատարված ծախսերը ներկայացված են Ծանոթագրություն 7-ում:

**(բ) Ծրագրի ավարտ**

Ծրագրի փակման ամսաթիվը 2024 թվականի մայիսի 31-ն է:

2024 թվականի մայիսի 31-ից հետո սկսվում է ծրագրի արտոնյալ ժամանակահատվածը: Թեև ծրագիրն ավարտվում է մայիսի 31-ին, ստորև նշված գործողությունների հետ կապված հիմնական պայմանագրերը դեռ ավարտված չեն.

1. Ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի, ավտոկայանատեղիների կառուցում և տարածքի բարեկարգում,
2. Ինժեներական բիզնես աքսելերատորի համար սարքավորումների և կահույքի ձեռքբերում
3. Միջազգային հավատարմագրման համար երկու չափագիտական լաբորատորիաների պատրաստում,
4. Նավթի փորձարկման լաբորատոր սարքավորումների սպասվող տեղակայումներ:

Հայաստան առաքելության ընթացքում Համաշխարհային բանկի թիմի կողմից ստեղծվել է օգնական հուշագիր, որը սահմանում է ծրագրի իրականացման ընթացքը: 2024 թվականի ապրիլին կայացած առաքելության ընթացքում Համաշխարհային բանկի թիմը հանդիպել է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարարի հետ: Հանդիպմանը քննարկվել է ծրագրի գործունեության ընթացքը, ներառյալ հետփակման աշխատանքները, կենտրոնանալով ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի կառուցման վրա: Համաշխարհային բանկի թիմին զեկուցվել է, որ Կառավարությունը ֆինանսավորելու և ավարտելու է աքսելերատորի շենքի կառուցումը պետական բյուջեից ծրագրի փակումից հետո: Ղեկավարության ունեցած տեղեկատվության համաձայն, ներկայումս Կառավարությունը գտնվում է պետական մարմնի նշանակման գործընթացում, որն անմիջականորեն պատասխանատու է Ինժեներական աքսելերատորի շենքի հետ կապված պայմանագրերի կատարման և ավարտի համար (վերը նշված 1-ին և 2-րդ կետերը):

### (գ) Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում

Ծրագրի Մաս Ա «*Առևտրի խթանման և որակի ենակառուցվածքի արդյունավետության բարելավում*» բաղադրիչի շրջանակներում, ՀԲ-ն կատարում է *Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում*, որի մասով այն ենթակա է անկախ աուդիտորի կողմից աուդիտի:

*Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման* համաձայն՝ ՀԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրում է լրացուցիչ վարկային միջոցներ համաձայնեցված գործողություններն իրականացնելու, արդյունք ապահովելու դեպքում (*Ցուցանիշների վրա հիմնված հատկացումներ* կամ ՑՀՀ), որը հանգեցնում է առևտրի խթանման և որակի համակարգի բարելավմանը: ՀՀ կառավարությունը հատկացումները ստանում է իրականացված յուրաքանչյուր ՑՀՀ-ին բաշխված գումարների հիման վրա այնքանով, որքանով դրանք բավարարում են Կառավարության կողմից կատարած *Թույլատրելի ծախսերի ծրագրերը* կամ ԹԾԾ-երը:

Ծրագրերի իրականացման գրասենյակը հաշվետվություն է ներկայացնում ՑՀՀ-ի իրականացման վերաբերյալ՝ տրամադրելով կոնկրետ իրականացրած ՑՀՀ-ի և ԹԾԾ-ի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը: Վերջին հաշվետվությունը տրամադրվել է 2020-ին:

## 2 Պատրաստման հիմունքներ

### (ա) *Համապատասխանության մասին հայտարարություն*

Ներկայացվող հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն՝ հիմնվելով *Ֆինանսական հաշվետվողականությունն ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի* Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ) վրա:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են հետևյալ հաշվետվություններից՝

- Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն,
- Միջոցների օգտագործման մասին հաշվետվություն ըստ Ծրագրի գործունեության տեսակների,
- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն,
- Հատուկ հաշվի հաշվետվություն,
- Ծրագրի հաշվի հաշվետվություն:

Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն գործառնությունները և դեպքերը ճանաչվում են դրամական միջոցների ստացման կամ դրամական միջոցներով վճարման պահին:

**(բ) Հաշվետվության արժույթ**

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների հաշվետվության արժույթը ԱՄՆ դոլարն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով՝ 1 ԱՄՆ դոլարի ճշտությամբ:

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

**(ա) Արտարժույթով գործարքներ**

ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվի մնացորդը վերահաշվարկվում է ԱՄՆ դոլարով՝ կիրառելով 2023 թվականի դեկտեմբերի 31-ի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանած ԱՄՆ դոլարի փոխարկման հաշվարկային փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլարն ընդունելով 404,79 ՀՀ դրամ:

**(բ) Հարկեր**

Կիրառվող բոլոր հարկային պարտավորությունները հաշվարկվել և վճարվել են ՀՀ հարկային կանոնակարգերին համապատասխան:

**(գ) Ծրագրի միջոցները**

Ծրագրի միջոցները ստացվում են ՎԶՄԲ-ից և ՀՀ կառավարությունից:

## 4 Վճարումների դիմումների համադրում

**2023**

| Վճարման դիմում | Ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական ծառայությունների և խորհրդատվական ծառայությունների (այդ թվում՝ աուդիտորական ծառայությունների), վերապատրաստումների և լրացուցիչ գործառնական ծախսերի ձեռքբերում Նախագծի Բ.1 , Գ և Դ Մասերի շրջանակում | Դրամաշնորհներ Նախագծի Բ.2 մասի շրջանակում | Պետություն-Մասնավոր Գործընկերության Նախաձեռնությունների Ֆինանսավորում Նախագծի Մաս Բ.3-ի շրջանակներում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| 33-DA | 219,373 | 186,782 | 166,243 | 572,398 |
| 34-DA | 53,442 | (98,063) | 582,022 | 537,401 |
| 35-DA | 147,629 | 52,199 | 146,617 | 346,445 |
| 36-DA | 175,518 | 10,010 | 183,397 | 368,925 |
| | **595,962** | **150,928** | **1,078,279** | **1,825,169**[1] |

**2022**

| Վճարման դիմում | Ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական ծառայությունների և խորհրդատվական ծառայությունների (այդ թվում՝ աուդիտորական ծառայությունների), վերապատրաստումների և լրացուցիչ գործառնական ծախսերի ձեռքբերում Նախագծի Բ.1 , Գ և Դ Մասերի շրջանակում | Դրամաշնորհներ Նախագծի Բ.2 մասի շրջանակում | Պետություն-Մասնավոր Գործընկերության Նախաձեռնությունների Ֆինանսավորում Նախագծի Մաս Բ.3-ի շրջանակներում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| 24-DA | 79,574 | 379,502 | 48,990 | 508,066 |
| 25-DA | 63,086 | 354,642 | 152,364 | 570,092 |
| 27-DA | 157,423 | 375,084 | 83,851 | 616,358 |
| 29-DA | 220,805 | 154,833 | 215,982 | 591,620 |
| 30-DA | 79,509 | 65,928 | 185,686 | 331,123 |
| | **600,397** | **1,329,989** | **686,873** | **2,617,259**[2] |

[1] Ի լրումն Ծախսերի մասին հաշվետվության՝Արձանագրությունների պատճենները ներկայացված են 3,842,925 ԱՄՆ դոլար ընհանուր գումարով:
[2] Ի լրումն Ծախսերի մասին հաշվետվության՝Արձանագրությունների պատճենները ներկայացված են 1,507,897 ԱՄՆ դոլար ընհանուր գումարով:

## 5 Հատուկ հաշվի և ՀՀ Կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվություն

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| **Սկզբնական մնացորդ** | 1,355,198 | 1,991,934 |
| *Ավելացումներ՝* | | |
| Ընթացիկ ժամանակաշրջանում ՀԲ-ից ստացված կանխավճար/համալրում | 5,668,094 | 4,125,156 |
| **Հատուկ հաշվին կատարված կանխավճարի ներկա չմարված գումար** | **7,023,292** | **6,117,090** |
| **Վերջնական մնացորդը տեղափոխված հաջորդ ժամանակաշրջան** | 1,602,384 | 1,355,198 |
| Ավելացում՝ ընթացիկ ժամանակաշրջանում կատարված թույլատրելի ծախսեր | 5,420,908 | 4,761,892 |
| **Ընդհանուր հաշվարկված կանխավճար** | **7,023,292** | **6,117,090** |

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| **Սկզբնական մնացորդ** | - | **89,866** |
| *Ավելացումներ՝* | | |
| Ընթացիկ ժամանակաշրջանում ՀՀ կառավարության կողմից կատարված համաֆինանսավորում | 1,308,156 | 939,179 |
| Հանած՝ փոխանակման փոխարժեքի տարբերությունը | 2,645 | 11,625 |
| **Ծրագրի հաշվին կատարված կանխավճարի ներկա չմարված գումար** | **1,310,801** | **1,040,670** |
| **Վերջնական մնացորդը տեղափոխված հաջորդ ժամանակաշրջան** | - | - |
| Ավելացում՝ ընթացիկ ժամանակկշրջանում կատարված թույլատրելի ծախսեր | 1,310,801 | 1,040,670 |
| **Ընդհանուր հաշվարկված կանխավճար** | **1,310,801** | **1,040,670** |

# 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| ***Դրամական միջոցներ և դրամական միջոցների համարժեքներ*** | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ վարկի համար | - | - |
| Հատուկ հաշիվ վարկի համար (ՀԲ ֆինանսավորում) | 1,602,384 | 1,355,198 |
| | | |
| ***Ծրագրի կուտակային ծախսեր*** | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորման կուտակային ծախսեր | 4,988,005 | 3,677,204 |
| Վարկային միջոցներից ֆինանսավորման կուտակային ծախսեր | 28,126,896 | 22,705,988 |
| **Ընդհանուր ակտիվներ** | 34,717,285 | 27,738,390 |
| | | |
| ՄԻՋՈՑՆԵՐ | | |
| **Ծրագրի ֆինանսավորում** | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ վարկի համար | 4,968,276 | 3,660,120 |
| Հատուկ հաշիվ վարկի համար (ՀԲ ֆինանսավորում) | 29,729,280 | 24,061,186 |
| **Ընդհանուր միջոցներ** | 34,697,556 | 27,721,306 |
| | | |
| **Արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն** | | |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ վարկի համար | 19,729 | 17,084 |
| Հատուկ հաշիվ վարկի համար (ՀԲ ֆինանսավորում) | - | - |
| **Ընդհանուր արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն** | 19,729 | 17,084 |
| **Ընդհանուր զուտ ակտիվներ և պարտավորություններ** | 34,717,285 | 27,738,390 |

# 7 Ծախսեր՝ Իրականացնող գործակալությունների կողմից

## (ա) Ուղղակի վճարումներ

*Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում* շրջանակում ԱԽՈԵ ծրագրի կառավարման մարմինը ուղղակիորեն մատակարարներին 2023 թվականին վճարել է 4,829,224 ԱՄՆ դոլար, իսկ 2022 թվականին՝ 2,615,295 ԱՄՆ դոլար:

## (բ) Ծախսեր իրականացված ՆԱԿ–ի կողմից

i. Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում բաղադրիչի շրջանակներում, ՆԱԿ-ի միջոցով Արտահանողների Զարգացման Դրամաշնորհներ Ծրագրի շրջանակներում հատկացված դրամաշնորհներ:

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Վերադարձված դրամաշնորհներ | (195,037) | - |
| Տրված դրամաշնորհներ | - | 754,086 |
| **Ընդհանուր** | **(195,037)** | **754,086** |

ii. ՆԱԿ-ի կողմից կատարված գործառնական ծախսեր

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Աշխատակազմի վարձատրություն | 3,140 | 25,978 |

## (դ) Ծախսեր իրականացված ՁԻՀ–ի կողմից

i. Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում բաղադրիչի շրջանակներում, ՁԻՀ-ի միջոցով Նորարարության զարգացման և մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհներ շրջանակներում հատկացված դրամաշնորհներ

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Տրված դրամաշնորհներ | 100,144 | 421,907 |

ii. ՁԻՀ -ի կողմից կատարված գործառնական ծախսեր

| *ԱՄՆ դոլար* | 2023 | 2022 |
|---|---|---|
| *Ինժեներական քաղաքի գործառնական ծախսերը* | **830,455** | **511,445** |
| Աշխատավարձ | 429,334 | 337,627 |
| Միջոցառումների իրականացում | 48,688 | 206 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | 28,760 | 28,203 |
| Պրոֆեսիոնալ ծառայություններ | 24,720 | 20,879 |
| Այլ | 298,953 | 124,530 |
| *Նորարարական համաֆինանսավորվող դրամաշնորհների գծով գործառնական ծախսեր* | **82,626** | **131,235** |

| | | |
|---|---|---|
| Աշխատավարձ | 61,303 | 59,385 |
| Հաշվապահական հաշվառման ծառայություններ | 4,421 | 34,838 |
| Միջոցառումների իրականացում | 1,860 | 9,364 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | 377 | 6,113 |
| Այլ | 14,665 | 21,535 |
| *Գերհաշվարկային կենտրոնի գործառնական ծախսերի ստեղծում* | **162,268** | **56,370** |
| Աշխատավարձ | 81,557 | 28,751 |
| Հաշվապահական հաշվառման ծառայություններ | 41,825 | 22,010 |
| Այլ | 38,886 | 5,609 |
| *Կիբերանվտանգության լաբորատորիայի ստեղծում* | **599,769** | **339,136** |
| Աշխատավարձ | 366,160 | 244,587 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | 84,518 | 2,586 |
| Հաշվապահական հաշվառման ծառայություններ | 42,874 | 22,344 |
| Այլ | 106,217 | 69,619 |
| **Ընդհանուր** | **1,675,118** | **1,038,186** |

ՁԻՀ-ը կատարել է նաև ծրագրի գործառնական ծախսեր, որոնք ներառվել են Մաս Դ. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում բաղադրիչում:

| *ԱՄՆ դոլար* | **2023** | **2022** |
|---|---|---|
| Հաշվապահական հաշվառման ծառայություններ | 12,360 | 25,562 |
| Վարձավճար | - | 19,578 |
| Աշխատավարձ | - | 17,326 |
| Այլ | 3,629 | 13,755 |
| **Ընդհանուր** | **15,989** | **76,221** |